# Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N 1085-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ  ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ   ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«      » -------------- 2020թ. N       - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1085-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի  34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կառավարությունը ո ր ո շ ու մ  է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «Պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու

մասին պայմանգիր չկնքած զինծառայողների), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների և սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1085-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «և ուսումնառության տարիների» բառերը փոխարինել «, ուսումնառության տարիների և առաջադիմության» բառերով.

բ. 3-րդ ենթակետում «երկրների» բառից հետո լրացնել «և առաջադիմության» բառերը.

2) որոշման 2-րդ հավելվածում՝

ա. 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովությունը, ըստ շնորհված զինվորական կոչումների, ուսումնառության տարիների և առաջադիմության, սահմանվում է.

(դրամ)

NN
ը/կ

Ըստ կուրսանտին շնորհված զինվորական կոչման

Ամսական չափերը

Ըստ ուսումնառության տարիների

1-ին տարի 2-րդ տարի 3-րդ տարի 4-րդ տարի 5-րդ տարի

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | ավագ | 27 100 | 28 300 | 29 500 | 30 700 | 31 900 |
| 2. | ավագ սերժանտ | 23 200 | 24 400 | 25 600 | 26 800 | 28 000 |
| 3. | սերժանտ | 19 400 | 20 600 | 21 800 | 23 000 | 24 200 |
| 4. | կրտսեր սերժանտ | 15 500 | 16 700 | 17 900 | 19 100 | 20 300 |
| 5. | եֆրեյտոր | 11 600 | 12 800 | 14 000 | 15 200 | 16 400 |
| 6. | շարքային | 5 300 | 7 100 | 9 500 | 11 300 | 13 100 |

4. Օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովությունը, ըստ ուսումնառության երկրների և առաջադիմության, սահմանվում է.

(դրամ)

| Ամսական չափերը | | |
|---|---|---|
| Ըստ ուսումնառության երկրների | | Ըստ առաջադիմության (5-րդ կետի պայմանն ապահովելու դեպքում) |
| Ռուսաստանի Դաշնություն | Այլ օտարերկրյա պետություններ | |
| 10 000 | 100 000 | 10 000 |

».

բ. լրացնել 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է կիսամյակային և (կամ) հաջորդ կուրս փոխադրվելու գնահատման արդյունքներով՝ կուրսանտի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ռազմաուսումնական հաստատությունում սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 80 տոկոսը կազմելու դեպքում: Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է գնահատված կիսամյակին և (կամ) հաջորդ կուրս փոխադրվելու քննություններին հաջորդող կիսամյակի ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ից: